

ՆԿԱԶԵԼ Ե ՍԱՅՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

3-ը ապրիլի, 2005թ. [համառոտ հաշվետվություն, հատվածներ]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ ՀՆԱՐԱՎՈՐ ՍԱՅՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՀ Ազգային ժողովում շարունակվում են քննարկումները 2005թ. ծրագրվող սահմանադրական բարեփոխումների եւ սահմանադրական հանրաքվեի շուրջ:

Ինչպես գիտեք, ՀՀ Սահմանադրության փոփոխությունների փորձ արվել էր նաեւ 2003թ.: Մինչդեռ սահմանադրական փոփոխությունների նախագիծը քվեարկությամբ չստացավ Հայաստանի քաղաքացիների անհրաժեշտ աջակցությունը:

Որքանով են մեր քաղաքացիներն իրազեկված սահմանադրական փոփոխությունների ներկայիս նախաձեռնությունը, արդիակա՞ն է արդյոք այս նախաձեռնությունը հասարակության համար, ընտրելու իրավունք ունեցող մեր քաղաքացիների ո՞ր հատվածն է պատրաստակամ մասնակցել հանրաքվեի քվեարկությանը:

Այս հարցերին պատասխանելու համար «Ընտրական համակարգեր կենտրոնի» Vox Populi հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոնն իրականացրել է կրկնական հետազոտություն Երեւան քաղաքի բնակիչների շրջանում: Առաջին հետազոտությունն անցկացվել էր 2004թ. հոկտեմբերի 6-9-ը, երկրորդը՝ 2005թ. ապրիլի 1-3-ը:

ԵՐԵՎԱՆԻ ՍԱՅՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՔՎԵՆ ԱՆՑԿԱՑՎԻ ԱՌԱՋԻԿԱ ԿԻՐԱԿԻ ՕՐԸ, ԿՄԱՍՆԱԿՑԵՔ ԱՐԴՅՈՔ ՀԱՆՐԱՔՎԵԻ ԸՎԵԱՐԿՈՒԹՅԱՆԸ

	2004թ. 6-9-ը հոկտեմբերի	2005թ. 1-3-ը ապրիլի
Այո, կմասնակցեմ	9%	10%
ավելի շուտ կմասնակցեմ	13%	9%
ավելի շուտ չեմ մասնակցի	15%	24%
ոչ, չեմ մասնակցի	31%	36%
դժվարանում եմ պատասխանել	32%	21%

Անցած 6 ամիսների ընթացքում հանրաքվեի քվեարկությանը մասնակցողների թիվը կրճատվել է՝ 22%-ից նվազելով 19%-ի, իսկ չմասնակցողների թիվն ի հաշիվ չկողմնորոշվածների աճել է՝ 46%-ից հասնելով 60%-ի:

ԳԻՏԵՔ ԱՐԴՅՈՔ ԹԵ ԻՆՉ ՍԱՅՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ
ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ

	2004թ. 6-9-ը հոկտեմբերի	2005թ. 1-3-ը ապրիլի
Այո	8%	11%
ոչ	56%	67%
դժվարանում եմ պատասխանել (պատասխան չկա)	36%	22%

Արդյունքները ցույց են տալիս, որ չնայած իրազեկվածների թիվը 8%-ից աճել է 11%-ի՝ այն դեռևս շատ ցածր է: Իսկ սահմանադրական փոփոխությունների մասին իրենց տեղեկացված չհամարողների թիվն անցած 6 ամիսների ընթացքում 56%-ից հասել է 67%-ի:

Չարցումն անցկացվել է 2005թ. ապրիլի 1-3-ը, Երեւան քաղաքի 678 (18 եւ ավելի տարիքի) բնակիչների շրջանում: Չարցումը հեռախոսային էր: Ընտրանքը՝ պատահական, չկրկնվող:

«Ընտրական համակարգեր կենտրոնի»

Vox Populi հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն

www.expert.am

www.persons.am

mail: info@expert.am, expert@expert.am , info@persons.am